ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2023/86

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 մայիսի 2023 թ. N 86

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 40

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023թ.մայիսի 22-ին քննարկեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ հաստատություն, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	19 ապրիլի 2022 թ.
ինքնավերլուծության ներկայացում	29 օգոստոսի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում	05-08 դեկտեմբերի 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	23 փետրվարի 2023թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	16 մարտի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ «Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր» և «Ենթակառուցվածք և ռեսուրսներ» գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ**

Քոլեջն իրականացրել է մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման գործընթաց, որի արդյունքում ձևավորվել և ներդրվել են նոր ձևաչափով մշակված կրթական ծրագրերը, որոնցում ներառված են ՄԿԾ վերջնարդյունքները:

Սակայն կրթական ծրագրերում սահմանված վերջնարդյունքները լիարժեքորեն փոխկապակցված չեն մասնագիտություններին ներկայացվող պահանջներին, այլ արտացոլում են առարկաների և մոդուլների ուսումնառության ակնկալվող արդյունքները, հստակեցված չեն ընտրովի առարկաները:

Քոլեջում դեռևս ձևավորված չէ ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության համալիր քաղաքականություն, գնահատման համակարգը լիովին չի արտացոլում սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը: Համակարգված չեն ուսումնառության նյութերը և ուսանողներին տրվող հանձնարարականները:

Քոլեջը կարևորում է ակադեմիական ազնվության կարգի մշակումը, որը սակայն գործնականում դեռևս չի արմատավորվել, բենչմարքինգի իրականացման և ՄԿԾ մշտադիտարկման գործընթացներն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դրված չեն:

ՄՈՒՀ-ում գործում են ՊԴ կազմի ընտրության ընթացակարգեր, երիտասարդ կադրերով համալրելու որոշակի գործընթացներ: ՄԿԾ-ներում սահմանված են մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսի որակավորմանը ներկայացվող պահանջները: Դասախոսական կազմը համալրվում է անհրաժեշտ որակավորում ունեցող, ինչպես նաև մասնագիտական ոլորտից գործնական հմտություններ ունեցող մասնագետներով: Առկա են դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, խրախուսման որոշակի գործիքակազմ, քոլեջն ունի համեմատաբար կայուն դասախոսական կազմ կրթական ծրագրերի իրականացման համար:

Քոլեջն իր Զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներն իրականացնելու և կրթական

ծրագրերի վերջնարդյունքներին հասնելու համար ապահովված չէ համապատասխան նյութական և ֆինանսական միջոցներով, ունի մասնագիտական գրականության և նյութատեխնիկական բազայի համալրման խնդիրներ, կրթական ծրագրերի իրականացման համար նախատեսված կաբինետներն ու լաբորատորիաները դեռևս լիարժեք համալրված չեն արդի սարքավորումներով:
Պրակտիկաների և բուժհաստատություններում անցկացվող դասընթացների շնորհիվ հաստատությունը հիմնականումկարողանում է ապահովել արդի, գործնական հմտություններ տիրապետող շրջանավարտների, որոնք պահանջված են աշխատաշուկայում:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

ՄՈՒՀ-ի գործունեությունը համապատասխանում է սահմանված առաքելությանը և նպատակներին, ներքին և արտաքին շահակիցների կարիքներին, վերանայվել և բարելավվել է Զարգացման ռազմավարական ծրագիրը, սահմանվել են գնահատման առանցքային ցուցանիշներ: Կատարվել են կառուցվածքային բարեփոխումներ, մշակվել են ստորաբաժանումների համար աշխատանքային ընթացակարգեր, պաշտոնի անձնագրեր, սահմանվել են գործառույթները, որոնց գործարկումը սակայն դեռևս մեկնարկային փուլում է:

Քոլեջում որոշակիորեն կանոնակարգվել են նաև որոշումների կայացման գործընթացները, սակայն դրանք դեռևս չեն իրականացվում միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, ներքին շահակիցները նախաձեռնողական չեն իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացներում առաջարկություններով հանդես գալու համար: Ֆինանսական և նյութական ռեսուրսների սղությունը ևս որոշակիորեն խոչընդոտում է հաստատության սահմանած նպատակների արդյունավետ իրականացումը և զարգացման կայունությունը:
Հաշվի առնելով քոլեջում վերջին տարիներին տեղի ունեցող բարեփոխումների ընթացքը՝ նկատելի է, որ քոլեջը գնում է իր գործընթացները կանոնակարգելու ճանապարհով, սակայն կառավարման գործընթացները դեռևս բավարար չափով չեն նպաստում քոլեջի գերակա ուղղությունների համաչափ զարգացմանը:
ՄՈՒՀ-ը ձևավորել է որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, բարելավել է փաստաթղթային հենքը, որը համապատասխանեցվել է ՈԱ գործընթացների տրամաբանությանը, ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են ՈԱ գործընթացներում, ՈԱ պատասխանատուի ցուցաբերած գործուն աջակցությունը տեսանելի է ՈԱ մշակույթի ձևավորման և մշակված ընթացակարգերի ներդրման համար:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.***

Քոլեջը սահմանել է հետազոտական ուղղությամբ իր հետաքրքրությունները, քայլեր է իրականացնում խրախուսելու հետազոտության իրականացումը, փորձում է որոշակի միջոցներ հատկացնել, ինչպես նաև ձևավորել մեխանիզմներ ուսումնառության գործընթացում հետազոտական բաղադրիչի ավելացման համար:

ՄՈՒՀ-ում ձևավորված է ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ, կանոնակարգվել են հաշվետվողականության մեխանիզմները, ներդրվել են հաստատության գործընթացների թափանցիկության ապահովման հարթակներ, գործում են հետադարձ կապի ապահովման որոշակի մեխանիզմներ: Ներդրված է հաշվետվությունների միասնական ձևաչափ, սակայն բացակայում է վերլուծական բաղադրիչը:

ՄՈՒՀ-ը կարևորում է միջազգայանցման գործընթացները, հիմքեր է ձևավորել փոխգործակցության շարունակականության ապահովման տեսանկյունից, համագործակցում է տեղական և միջազգային կազմակերպությունների ու բժշկական ոլորտի հաստատությունների հետ, հիմքեր է ստեղծել միջազգայնացման համար:

Սակայն քայլեր չեն արվում բենչմարքինգի իրականացման հարցում, ինչը թույլ կտար ապահովել վերջնարդյունքների համադրելիությունը համանման եվրոպական կրթական ծրագրերին:

ՄՈՒՀ-ը համագործակցում է տարբեր բժշկական կենտրոնների, այդ թվում կլինիկաների և դեղատնային ցանցերի հետ, ինչը նպաստում է ուսանողների պրակտիկ հմտությունների ձևավորմանը, և հնարավորություն է ընձեռում նրանց աշխատանքի տեղավորմանը:

Քոլեջն իր կառուցվածքում ներառել է արտաքին կապերի բաժինը, որը սակայն մինչ օրս աշխատակից չունի:

ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ, քայլեր են իրականացվում ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով, վարչական կազմը պատրաստակամ է ուսանողներին աջակցելու առաջացած խնդիրների դեպքում, ուսանողները որոշակիորեն ներգրավված են հետազոտական աշխատանքներում, ներդրված են ուսանողների կարիերային նպաստող որոշ ծառայություններ, ինչպես նաև առկա են մատուցվող ծառայությունների գնահատման գործիքներ:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտական կրթական ծրագրեր» և «Ենթակառուցվածք և ռեսուրսներ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.

- իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
- նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը,
- դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական պարբերական վերապատրաստումների իրականացմանը,
- դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի և խրախուսման մեխանիզմների բարելավմանը,
- հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձևավորմանը,
- ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
- ներքին և արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականության համակարգի բարելավմանը՝ հաշվետվություններում ապահովելով վերլուծական բաղադրիչը,
- որակի մշակույթի շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
- որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման և գնահատման գործուն մեխանիզմների ներդրմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2023 թ.մայիսի 30
ք.Երևան